

ՄԻԱՑՅԱԼ ԵՎ ԱՆԿԱԽ ԳՅՅԱՍՏԱՆԻ ՄԱՍԻՆ ԳԳ  
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 1919Թ. ՄԱՅԻՍԻ 28-Ի  
ԳՅՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆՆ ՈՒ ԴՐԱ ԳԵՏԵՎԱՆՔՆԵՐԸ

1919թ. մայիսի 28-ին Առաջին Հանրապետության կառավարության կողմից Միացյալ և անկախ Հայաստանի մասին արված հայտարարությանն անդրադարձել են տարբեր հեղինակներ: Սույն հոդվածում ներառված որոշ նյութեր, կարծում ենք, այլ աշխատությունների հետ նպաստում են նշված հայտարարության մասին ավելի ամբողջական պատկերացում կազմելուն:

1919 թ. մայիսի 28-ին ԳԳ խորհրդարանի (խորհրդի) շենքում կատարվեց Միացյալ և անկախ Հայաստանի մասին հայտարարությունը: Այդ կապակցությամբ տեղի ունեցած տոնակատարություններին ներկա էին հանրապետության ղեկավարները և մեծ թվով հյուրեր, ներառյալ Պարսկաստանի, Ադրբեջանի, Վրաստանի պատվիրակները, բրիտանական բրիգադային զեներալ Զ. Մ. Դևին, ամերիկյան օգնության գործակալության ներկայացուցիչները:

Միացյալ Հայաստանի անկախության հայտարարման ակտը խորհրդարանի շենքում կարդաց վարչապետի և արտաքին գործերի նախարարի պաշտոնակատար Ա. Խատիսյանը: Նրանում մասնավորապես նշված էր. «Այժմ, Անդրկովկասում և Օսմանյան կայսրության սահմաններում գտնված պապենական հայկական երկրների միացման և անկախության այս ակտը կատարելով՝ Հայաստանի կառավարությունը հայտարարում է, որ Միացյալ Հայաստանի պետական ձևն է ռամկավար հանրապետությունը, և որ ինքը հանդիսանում է Միացյալ Հայաստանի Հանրապետության Կառավարությունը:

Այսպիսով, ներկայումս Հայաստանի ժողովուրդն է իր ամբողջացած հայրենիքի գերագույն տերն ու տնօրենը, և Հայաստանի Պառլամենտն ու Կառավարությունը հանդիսանում են Միացյալ Հայաստանի ազատ ժողովուրդը շահկապող բարձրագույն օրենսդիր և գործադիր իշխանությունը:

Հայաստանի Կառավարությունը սույն ակտը հրատարակում է 1919թ. ապրիլի 27-ի պառլամենտի որոշմամբ կառավարությանը տրված հատուկ լիազորությունների հիման վրա»<sup>1</sup>:

<sup>1</sup> Տես ՀՀ ՊԱ, ֆ. 200, ց. 1, գ. 35, մ. 2, թ. 84, նաև՝ «Աշխատավոր», 1919 հունիսի 1: Մայիսի 28-ի ակտի մասին ավելի մանրամասն տես՝ Richard G. Hovhannissian, The Republic of Armenia. Vol. 1, The First Year, 1918-1919. Berkeley - Los Angeles - London, 1971, էջ 459-464, Ս. Վրացյան, Հայաստանի Հանրապետություն, Եր., 1993, էջ 276-280:

1919 թ. ապրիլի 27-ին ՀՀ Խորհրդին մեկ ամսով արձակուրդ տալու մասին օրենքի քվանդակությունը հետևյալն էր.

«1. Խորհրդի պարապմունքները դադարեցնել մեկ ամսվա ժամանակամիջոցով:

2. Դադարի միջոցին Խորհրդի բոլոր իրավունքները հանձնել կառավարությանը:

3. Կառավարությանը հանձնարարել արտակարգ կարևորություն ունեցող դեպքերում հրավիրել Խորհրդի արտակարգ նիստ»<sup>2</sup>:

Ինչպես տեսնում ենք, 1919 թ. ապրիլի 27-ի օրենքով կառավարությանը հանձնարարված էր «արտակարգ կարևորություն ունեցող դեպքերում հրավիրել Խորհրդի արտակարգ նիստ»: Սակայն այդ ժամանակ գործող կալիցին կառավարությունը դա չէր արել: Ստացվում էր, որ կամ Միացյալ Հայաստանի անկախության մասին հայտարարությունը և Խորհրդարանի կազմի մեջ 12 արևմտահայ պատգամավորներ մտցնելը չունեին «արտակարգ կարևորություն», կամ էլ կառավարությունը չէր կատարել Խորհրդարանի կողմից իրեն տրված հանձնարարությունը: Առավել ևս, որ ընդամենը մի քանի օր հետո, հունիսի 4-ին, տեղի ունեցավ հանրապետության օրենսդիր մարմնի նիստ: Հարց է առաջանում՝ ինչ է, այդքան դժվար էր այդ կարևոր հարցի կապակցությամբ հրավիրել Խորհրդարանի արտակարգ նիստ:

ՀՀՂ Վրաստանի կենտրոնական և Թիֆլիսի տեղական կոմիտեների օրգան «Աշխատավոր»-ում մասնավորապես նշվում էր. «Եթե տեղի է ունեցել մի հակապարլամենտական ակտ - դա ապրիլի 27 պարլամենտի ինքնացրման ակտն է: Ուրեմն այստեղ կառավարութիւնը ոչ մի «յեղաշրջում» չի կատարել: Մասնակցութեամբ կաղետ մինիստրների՝ նա օգտուել է իրեն տրած լիազօրութիւններից այն չափով, ինչ անհրաժեշտ է եղել մոմենտի տեսակետից»<sup>3</sup>: Սակայն եթե Խորհրդարանի «ինքնացրումը» «հակապարլամենտական» ակտ էր, ապա այդ ժամանակ կառավարող կալիցին կառավարությունը կարող էր իր բացասական վերաբերմունքն արտահայտել այդ օրենսդրական ակտի կապակցությամբ:

Ըստ «Աշխատավոր» թերթի՝ 1919 թ. մայիսի 28-ին Խորհրդարանում տեղի էր ունեցել կառավարության արտակարգ նիստ, որը բացել էր հանրային կրթության նախարար Գ. Մելիք-Ղարազյոզյանը (ՀԺԿ անդամ- Ս.Ղ.), որից հետո էլ վարչապետի պաշտոնակատար Ա.Խատիսյանը կարճ ճառից հետո հրապա-

<sup>2</sup> Տե՛ս «Հայաստանի Հանրապետության պառլամենտի օրենքները (1918-1920 թթ.)», պատ. խմբագիրներ Ս. Միրզոյան, Ֆ. Մամիկոնյան, Երևան, 1998, էջ 55:

<sup>3</sup> Տե՛ս «Աշխատավոր», 1919 հունիսի 10:

րակել էր մայիսի 28-ի ակտը: Այդ արարողությանը ներկա էին նաև խորհրդարանի պատգամավորները:

Արարողության ժամանակ «ողջույնի ճառով» ելույթ ունեցողների թվում էր նաև խորհրդարանի նախագահ Ավ. Սահակյանը:

1919թ. մայիսի 28-ի հայտարարության ընթերցումից հետո Ա.Խատիսյանը՝ 1919թ. փետրվարին Երևանում կայացած արևմտահայերի երկրորդ համագումարի գործադիր մարմնի ընտրած 12 պատգամավորներին խնդրեց զբաղեցնել իրենց տեղերը հանրապետության խորհրդարանի անդամների համար հատկացված շարքում: Այդ իրադարձությունը մարմնավորելու էր հայ ժողովրդի երկու հատվածների միավորումը:

Ըստ որում, երբ խորհրդարանի անդամները վերահավաքվեցին հունիսի 4-ին, առաջին անգամ ապրիլի 27-ից հետո, «բոլոր 12 թուրքահայ պատվիրակները տեղեր գրավեցին դաշնակցական խմբակցության հետ՝ այսպիսով տալով նրան պարզ մեծամասնություն խորհրդում»<sup>4</sup>:

ԴՅ «Նախարարների խորհրդի կողմից մայիսի 27-ին հաստատված և հաջորդ օրը իրապարակված օրենքով, որպես երկու Հայաստանների իրական միացման արտահայտություն, որոշվեց՝ Հայաստանի խորհրդի կազմը համալրել արևմտահայերի 12 ներկայացուցիչներով: Օրենքում ասված էր. «Հրավիրել Հայաստանի խորհրդի նիստերին մասնակցելու որպես խորհրդի լիիրավ անդամներ՝ Արևմտահայ գործադիր մարմնի կողմից ընտրված 12 ներկայացուցիչներ»:

«Նախատեսված էր, որ արևմտահայ 12 պատգամավորների ներգրավումից հետո խորհրդարանը պիտի ունենար մեկ նիստ՝ կառավարությանը նոր լիազորություններ տալու համար և պիտի ցրվեր՝ տեղի տալով նոր ընտրովի խորհրդարանին»: Նախատեսված էր «նաև կառավարության ակտերի վավերացումը խորհրդարանում: Սակայն դեպքերն այնպես զարգացան, որ անհնարին դարձավ «ակտի» քննարկումը, իսկ մի քանի օր անց խորհրդարանը ինքնալուծարման ենթարկվեց»:

Սակայն «վերոհիշյալ արևմտահայ 12 ներկայացուցիչները ըստ կուսակցական պատկանելության եղել են միայն դաշնակցականներ»: Մինչդեռ «Կովկասում ապաստանած արևմտահայ գաղթականության մեջ զգալի կշիռ ու ազդեցություն ունեին Հայ ռամկավարները և անաչառ մտեցման դեպքում

<sup>4</sup> Richard G. Hovannisian, *The Republic of Armenia*. Vol. 1, էջ 466:

այդ 12 անդամների թվում պետք է որ լինեին նաև ռամկավարներ»<sup>5</sup>:

Փարիզ մեկնած ՀՀ պատվիրակությանը կառավարության կողմից տված հրահանգում Պողոս Նուբարը դիտվում էր արևմտահայերի ներկայացուցիչ: Սակայն եթե հանրապետության կառավարությունը հիմք էր ընդունում Երևանում տեղի ունեցած արևմտահայերի համագումարի ընդունած որոշումը, «հայ ժողովրդի միահամուռ կամքը», ապա մայիսի 28-ի ակտի ընդունումից առաջ ՀՀ կառավարությունը կարող էր գոնե այդ մասին տեղյակ պահել Պողոս Նուբարին, առավել ևս, որ հայկական երկու պատվիրակությունների միջև առկա էր մրցակցություն (ըստ Ռ.Հովհաննիսյանի, Պողոս Նուբարը մայիսի 28-ի ակտի մասին իմացավ հանրապետության առաջին տարեդարձի նշումից մի քանի օր հետո և որոշ ժամանակ չի ունեցել այդ փաստաթղթի բառացի պատճեն): Թեև Ազգային պատվիրակության ղեկավարությունը միշտ չէ, որ ազգային խնդիրների լուծման հարցում կառուցողական մոտեցում է ցուցաբերել՝ ղեկավարվելով նաև անձնական շարժառիթներով, սակայն ՀՀ ղեկավարությունն էլ ուներ մեղքի իր բաժինն Ազգային պատվիրակության հետ հարաբերություններում լարվածության մեծացման հարցում:

Միացյալ և անկախ Հայաստանի ակտն ընդունելուց հետո հանրապետության կառավարությունը 1919 թ. մայիսի 30-ին նամակով դիմեց Թիֆլիսում և Երևանում գտնվող Իտալիայի, Ֆրանսիայի, Պարսկաստանի, Միացյալ Նահանգների ներկայացուցիչներին, Կովկասում բրիտանական ուժերի հրամանատարին, Երևանում բրիտանական միսիայի ներկայացուցչին: Նամակում հայտնվում էր, որ ուղարկվում է Միացյալ Հայաստանի անկախության հռչակման ֆրանսերեն լեզվով թարգմանված արձանագրությունը և խնդրվում էր հաղորդել իրենց կառավարություններին:

1919 թ. հունիսի 4-ին ՀՀ խորհրդարանի նիստը տեղի ունեցավ խիստ լարված պայմաններում: Նիստում ՀԺԿ, սոցիալ-դեմոկրատական խմբակցությունները բողոքեցին մայիսի 28-ի ակտի և խորհրդարանի կազմի մեջ 12 արևմտահայ պատգամավորներ մտցնելու դեմ ու հեռացան դահլիճից: Նրանց հետևեց նաև սոցիալիստ-հեղափոխականների (տեղների) խմբակցությունը: Դահլիճում «մնացին միայն ՀՀԴ խմբակցությունը և արևմտահայ 12 ներկայացուցիչ պատգամավորները: Այդ օրը մահմեդական խմբակցությունը նիստին բոլորովին չէր ներկայացել: Այնուհանդերձ, նիստը շարունակվում է»:

<sup>5</sup> Հակոբյան Ա. Մ., Հայաստանի խորհրդարանը և քաղաքական կուսակցությունները (1918-1920 թթ.), պատմական գիտությունների դոկտորի գիտական աստիճանի հայցման ատենախոսություն, Երևան, 1998, էջ 198-199:

ՀՀ խորհրդարանի 1919թ. հունիսի 4-ին կայացած նիստում ունեցած ելույթում վարչապետի պաշտոնակատար Ա. Խատիսյանի հիմնավորումները մայիսի 28-ի ակտի անհրաժեշտության կապակցությամբ հանգում էին հետևյալին.

1) Ակտի ընդունման անհրաժեշտության գիտակցումը հասունացել էր ժողովրդի մեջ: 2) Ակտն իրավական տեսակետից ՀՀ կառավարությանը, Փարիզում հանրապետությունը ներկայացնող պատվիրակությանը իրավունք ու հնարավորություն էր տալիս ներկայացնելու Միասնական Հայաստանի և ամբողջ հայ ժողովրդի շահերը: 3) ՀՀ տարածքն աստիճանաբար ընդարձակվում է: Հերթի է կանգնած Ալաշկերտի հովտի, Սարիղամիշ-երզում երկաթուղու գրավումը: Այդ օպերացիաների համար անհրաժեշտ են զորքեր: Հանրապետության զորքերում նախկին թուրքահայերին ներգրավելու համար անհրաժեշտ է ՀՀ կառավարությունը հռչակել ամբողջ միավորված Հայաստանի կառավարություն, ինչով Միասնական Հայաստանի կառավարությունը իրավունք կունենար հայկական կողմի աստիճանաբար զբաղեցրած շրջաններում իրականացնել կառավարում: 4) Այդ ակտը հարուցված էր նախկին թուրքահայերին առաջիկա խորհրդարանական ընտրություններին մասնակցելու իրավունք տալու անհրաժեշտությամբ: 5) Ըստ Ա.Խատիսյանի, միավորման ակտի տրամաբանական հետևանքը պետք է հանդիսանար խորհրդարանի առկա կազմի մեջ արևմտահայերի ներկայացուցիչների մտնելը, այդ պատճառով էլ կառավարությունը խորհրդարան իրավիրեց հանրապետության տարածքում գտնվող 200.000 արևմտահայերին ներկայացնող համագումարի կողմից ստեղծված կոմիտեի ընտրած 12 ներկայացուցիչներին: Իհարկե, անհրաժեշտ էր արևմտահայերին իրավիրել երկրի խորհրդարան, սակայն, կարծում ենք, որ այդ հարցը բավարար չափով նախապատրաստված չի եղել, ինչն առաջ բերեց լարվածություն, կառավարությունն այդ հարցում պետք է ավելի զգույշ մոտեցում ցուցաբերեր: 6) Խորհրդարանն իրեն տվել էր մեկ ամսյա արձակուրդ, իսկ այդ ժամանակ վրա էր հասել անկախ Հայաստանի տարեդարձի օրը և կառավարությունը որոշեց այդ պատմական օրը ժողովրդի հիշողության մեջ ամրացնել նման հայտարարությամբ: Սակայն կառավարությունը պարտավոր էր նման կարևոր որոշում ընդունելիս իրավիրել արձակուրդում գտնվող խորհրդարանի «արտակարգ նիստ». դա բխում էր 1919 թ. ապրիլի 27-ին խորհրդարանի ընդունած օրենքից: 7) Վարչապետի պաշտոնակատարը հերքում էր մամուլում և տարբեր կուսակցական շրջաններում հնչող այն կարծիքները, թե խորհրդարան արևմտահայերի 12 ներկայացուցիչներ մտցնելը հետապնդում էր օրենսդիր մարմնում մեկ կուսակցության համար

մեծամասնությունը ստեղծելուն: Ըստ Ա.Խատիսյանի, կառավարությանը խորհրդարանի առկա կազմում մեծամասնություն անհրաժեշտ չէր, քանի որ օրենսդիր մարմինը հավաքվելու էր մեկ նիստի՝ այդ օրվա նիստին, և այն էլ՝ իր արձակուրդը երկարացնելու համար, քանի որ շուտով տեղի էին ունենալու խորհրդարանական ընտրություններ: Այդ դեպքում արդյոք ավելի ճիշտ չէր լինի սպասել մինչև օրենսդիր մարմնի ընտրությունները, զբաղվել միայն այն հարցով, որ արևմտահայերն իրավունք ունենային մասնակցելու խորհրդարանական ընտրություններին, և չչտապել օրենսդիր մարմնի կազմի մեջ նոր պատվիրակներ մտցնել, ինչն իրավական և բարոյական տեսանկյունից խիստ վիճարկելի քայլ էր:

Իր ելույթում Ա. Խատիսյանը անդրադարձավ նաև այլ հարցերի:

ՀՀ խորհրդարանի 1919 թ. հունիսի 5-ին կայացած նիստում (նիստին մասնակցում էին դաշնակցական, այդ թվում 12 արևմտահայ ներկայացուցիչ պատգամավորները, 2 թուրք և 1 եզդի պատգամավոր) «22 ծայրով որոշում ընդունեց առհասարակ դադարեցնել իր աշխատանքները», քանի որ շուտով պիտի կայանային նոր խորհրդարանի ընտրությունները:

Օրենսդիր մարմնի հունիսի 5-ին կայացած նիստում որոշվեց նաև Միջագետք և Կիլիկիա ուղարկել մի ներկայացուցիչ՝ գաղթականների հարցով զբաղվելու համար: «Կառավարությունը և ընկերները» այդ պարտականությունը դրեցին Արսեն Կիտուրի վրա, որը խորհրդարանի կազմի մեջ մտցված 12 արևմտահայ պատգամավորներից մեկն էր:

1919թ. «հունիսի 5-ին վարչապետի պաշտոնակատար Ալ.Խատիսյանը, արտասովոր ու վտանգավոր ոչինչ չտեսնելով հունիսի 4-ի խորհրդարանական ճգնաժամում, հանգիստ տոնով հեռագրում է Թիֆլիս ՀՀ դիվանագիտական ներկայացուցչությանը. «Այս իրադարձությունը բոլորն ընդունեցին հանգիստ, կյանքը ընթանում է իր հունով, (խորհրդարանի- Ս.Ղ.) ընտրությունները կկայանան ժամանակին»:

Ըստ որում, խորհրդի (խորհրդարանի) թվակազմի «փոփոխման համարձակություն չէր ունեցել անգամ խորհրդարանը: Նախորդ 10 ամիսների ընթացքում խորհրդի կազմը մնացել էր անփոփոխ (46 հոգի): Եվ ահա կառավարությունը մեկ հարվածով այն դարձնում էր 58 հոգիանոց»:

1919թ. մայիսի 28-ի ակտը խորացրեց տարածայնություններն արևելահայերի և արևմտահայերի, դաշնակցականների ու հակադաշնակցական ուժերի միջև:

Դեռևս 1918թ. նոյեմբերի 4-ին ՀՀ խորհրդարանի նիստում կազմվել էր կոալիցիոն կառավարություն, որի կազմի մեջ մտել էին ՀՀԴ և ՀԺԿ ներկայացուցիչները:

Ասկայն ժողովրդական կուսակցության կենտրոնական կոմիտեն մնացել էր Թիֆլիսում: Երևանում գտնվող ժողովրդական կուսակցության ներկայացուցիչները հաստատել էին մայիսի 28-ի ակտն առանց իրենց կենտրոնական կոմիտեի համաձայնության: Ժողովրդական կուսակցության անդամների կարծիքով մայիսի 28-ի ակտը չէր համապատասխանում հայ ժողովրդի շահերին, այն միակողմանի բնույթ էր կրում, չունեցրեց Պողոս Նուբարի հավանությունը, չէր բխում Հայկական հարցի միջազգային վիճակից, հետևաբար պետք է չեղյալ հայտարարվեր:

Երանց պատասխանում էին, որ հայտարարությունը պատրաստված ու կատարված է ամբողջ կառավարության կողմից, հետևաբար ժողովրդական կուսակցության անդամ նախարարների հավանությամբ, որ հանդիսավորության նախագահողն էր ժողովրդական կուսակցության անդամ նախարարը (Գ.Մելիք-Ղարաբաղյանը) և այնտեղի է ինչ-որ առարկություններ առաջ քաշելը:

Թիֆլիսում հրատարակվող ժողովրդական կուսակցության օրգան «Ժողովրդի ծայն» թերթի հունիսի 8-ի համարում՝ ստեղծված վիճակից ելքը տեսնվում էր նրանում, որ կառավարությունը խորհրդարանի միջոցով պաշտոնապես դիմեր Փարիզում գտնվող թուրքահայ պատվիրակությանը և առաջարկեր փոխադարձ համաձայնությամբ հայության երկու հատվածների ներկայացուցիչներից ժամանակավոր կառավարություն կազմել և հրավիրել Միացյալ Հայաստանի «հիմնադիր ժողով»:

Հակասությունների հետագա սրումը հանգեցրեց նրան, որ 1919թ. հունիսին դադարեց գոյություն ունենալ ՀՀԴ և ՀԺԿ ներկայացուցիչներից կազմված կոալիցիոն կառավարությունը:

Մայիսի 28-ի ակտն առաջ բերեց Ազգային պատվիրակության նախագահ Պողոս Նուբարի բուռն վրդովմունքը:

ՀՀ արտաքին գործերի նախարարին ուղղած, 1919 թ. հունիսի 28-ով թվագրված նամակում Փարիզում գտնվող հանրապետության պատվիրակության նախագահը գրում էր, որ չորս օր առաջ Փարիզ հասած գեներալ Բագրատունին իր հետ բերել է Միացյալ Հայաստանի մայիսի 28-ի անկախության հայտարարագիրն առանց որևէ մանրամասնությունների: Ա. Ահարոնյանը նշում էր, որ Փարիզում, գաղութներում և հատկապես Կ. Պոլսում մայիսի 28-ի ակտի շուրջ վերին աստիճանի անհաճո և մեր դատին վնասաբեր ձևով բուռն վեճեր են սկիզբ առել մամուլի մեջ: Նամակում նշվում էր, որ լիապես իրազեկ

չլինելով հանրապետությունում տեղի ունեցող իրադարձություններին, մասնավորապես մայիսի 28-ի հետ կապված խնդիրներին, պատվիրակությունն անկարող է անհրաժեշտ հայտարարություններ անել:

Ստեղծված իրավիճակը կարգավորելու նպատակով Ա. Ահարոնյանի և Պողոս Նուբարի միջև կայացած ոչ պաշտոնական քննարկումների ժամանակ ՀՀ պատվիրակությունը միանգամայն իրավացիորեն Ազգային պատվիրակության նախագահի պահանջների մի մասն ընդունում էր վերապահումներով, քանի որ դրանց իրականացման դեպքում Պողոս Նուբարը կօժտվեր ըստ էության անսահմանափակ իշխանությամբ՝ դառնալով ՀՀ վարչապետ (ըստ որում, նրա նստավայրը պետք է լիներ Փարիզը) և միաժամանակ միասնական պատվիրակության նախագահ՝ օժտված արտակարգ լիազորություններով:

Ի վերջո Պողոս Նուբարի և Ա. Ահարոնյանի ստորագրությամբ հեռագիր ուղարկվեց վարչապետ Ա. Խատիսյանին: Հեռագրում նշվում էր, որ Թուրքահայաստանը ներկայացնող Ազգային պատվիրակությունն ընդունելի է համարում մայիսի 28-ին հրապարակված պայմանները: Խնդրվում էր չվավերացնել մայիսի 28-ի ակտը և սպասել մինչև Փարիզից ուղարկված պատվիրակները, որոնք ունեն լայն լիազորություններ, երևան հասնեն, որպեսզի միասին համաձայնության գան ամբողջական Հայաստանի մեկ կառավարություն և մեկ պառլամենտ կազմելու համար:

1919 թ. մայիսի 28-ի կառավարության հայտնի հայտարարությունից հետո հաջորդած դեպքերով, հունիսի սկզբից, ժողովրդականները, ինչպես նաև սոցիալ-դեմոկրատ մենչևիկները խորհրդարանական ընտրություններին բոյկոտ հայտարարեցին

Ընտրական բուռն պայքարի ժամանակ տեղ-տեղ նույնիսկ եղան բռնարարքներ, ընտրությունների ժամանակ թույլ տրվեցին զանազան խախտումներ և զեղծարարություններ: ՀՀ-ն ստացավ խորհրդարանի 80 պատգամավորական տեղերից 72-ը:

1919թ. հոկտեմբերի կեսերին երևան ժամանեց Ազգային պատվիրակության առաքելությունը՝ անդամներն էին Վ. Թեքեյանը (նախագահ), Ն. Տեր-Ստեփանյանը, և Ա. Հարությունյանը: Հոկտեմբերի 29-ից մինչև նոյեմբերի 16-ը բանակցություններ վարվեցին Ազգային պատվիրակության առաքելության և ՀՀ պատվիրակության միջև (ըստ Ա. Վրացյանի, ՀՀ պատվիրակությունը նշանակվել էր կառավարության կողմից, անդամներն էին՝ Ա. Վրացյանը (նախագահ), Շ. Միսաքյանը և Ա. Հարությունյանը, իսկ ըստ Վ. Թեքեյանի, այդ պատվիրակության անդամներն ընտրվել էին դաշնակցության ընդհանուր



ժողովի կողմից): Սակայն բանակցությունները չհանգեցրին դրական արդյունքների:

1920թ. փետրվարին վարչապետ Ա. Խատիսյանը ստանում է Պողոս Նուբարի հեռագիրը, որում հայտնվում էր, որ ստացել են կառավարության անունից Խատիսյանի ուղարկած նամակը, որի մեջ ձևակերպված էին Ազգային պատվիրակությանն արված առաջարկությունները (1919 թ. դեկտեմբերի 9-ին վարչապետ Ա. Խատիսյանը Պողոս Նուբարին ուղարկել էր մի նամակ, որի նպատակն ըստ էության փոխհամաձայնություն ձեռք բերելն էր): Նշվում էր, որ չնայած մի քանի կետերի, որոնք «նօրմալ պարագայում վիճելի կը լինեին, մենք նկատի առնելով հայրենիքի բարձրագույն շահերը, համաձայնել ենք այն պայմանով, որ Խատիսյանը անյապաղ հեռագրե Զանրապետութեան դելեգացիային կտրուկ հրահանգներ՝ դելեգացիաների ամփոփապես միանալու մասին, որպեսզի կարողանանք մեր հարցի վերջնական լուծման նախօրյակին հանդիսանալ Գաշտարար կոնֆերանսի առաջ որպես մի օրգան»:

Թեև որոշակի պայմանով իրենց համաձայնությունը կառավարության արած առաջարկություններին Պողոս Նուբարը պատճառաբանում էր «հայրենիքի բարձրագույն շահերով», սակայն այստեղ, կարծում ենք, էական դեր էր խաղացել նաև միջազգային ասպարեզում ԳԳ կառավարության դիրքերի ամրապնդումը՝ պայմաններում, երբ Գայ Ազգային պատվիրակության նախագահի և հանրապետությունում իշխող քաղաքական ուժի միջև առկա էր մրցակցություն և հակամարտություն:

1920թ. մարտի 6-ով թվագրված հաղորդագրությունում Ա. Մխիթարյանը հայտնում էր Ա. Զարությունյանին, որ տկարության պատճառով չի կարողացել նրա հետ Ազգային պատվիրակության հանձնարարությամբ մեկնել Երևան՝ մասնակցելու բանակցություններին, և խնդրում էր Ա. Զարությունյանին այդ պատվիրակության կազմում ստանձնելու նաև իր լիազորությունները:

1920թ. մարտի 25-ին Երևանում կայացած խորհրդակցությունում (այն պետք է վերջնականապես լուծեր ԳԳ կառավարության և Գայ Ազգային պատվիրակության միջև առկա խնդիրները, մասնավորապես կոալիցիոն կառավարություն և հաշտության կոնֆերանսում մեկ պատվիրակություն՝ կազմելու հարցերում): Խորհրդակցությանը ներկա էին վարչապետ Ա. Խատիսյանը, Ազգային պատվիրակության առաքելության հետ բանակցող հանձնաժողովի նախագահ Ա. Վրացյանը, Ազգային պատվիրակության լիազոր ներկայացուցիչ Ա. Զարությունյանը: Ա. Վրացյանը, հիշատակելով Ազգային պատվիրակության, նրա կողմնակիցների թշնամական վերաբերմունքը ԳԳ նկատմամբ, պատճառաբանելով իրավիճակի փոփոխությունը՝ պետությունների կողմից Գայաստանի

անկախության ճանաչումը, հայտարարեց, որ իրենք (ըստ Ա. Չարությունյանի, այդ որոշումն ընդունել էր դաշնակցության բյուրոն) որոշել են հարցը հանձնել դաշնակցության կուսակցական կոնֆերանսի քննարկմանը, որի «վճռից հետո մենք ի վիճակի կլինենք դրական կամ բացասական պատասխան տալու»: Խորհրդակցությունն ավարտվեց առանց դրական արդյունքների:

Ազգային պատվիրակության ղեկավարությունը միշտ չէ, որ կառուցողական դիրքորոշում է ցուցաբերել ազգային խնդիրների լուծման հարցում ղեկավարվելով նաև անձնական շարժառիթներով, սակայն ԳԳ ղեկավարությունը, կարծում ենք, նույնպես հաճախ ղեկավարվում էր կուսակցական, խմբակային շահերով: Ինչն էր խանգարում, ասենք, հայտարարել, որ հարցի լուծումը կհանձնվի խորհրդարանի քննարկմանը և վճռին՝ անկախ այն բանից, թե որքանով էր ճիշտ կամ սխալ Ազգային պատվիրակության ղեկավարության դիրքորոշումը: Կարելի է հետևություն անել, որ ԳԳ ղեկավարության համար կուսակցական կոնֆերանսը (որքան էլ, որ մեծ լիներ այդ կուսակցության կշիռը հանրապետության կյանքում) ավելի իրավասու էր քննարկելու և լուծելու ազգային խնդիրներ, քան «ռամկավար» հռչակված հանրապետության օրենսդիր մարմինը, առավել ևս, որ ԳԳ-ն երկրի խորհրդարանում բացարձակ մեծամասնություն ուներ:

1919թ. մայիսի 28-ի հայտարարության ընդունումն ունեցավ բացասական հետևանքներ: Այն նպաստեց հայ գործիչների, կուսակցությունների միջև հակասությունների սրմանը, կոալիցիոն կառավարության կազմալուծմանը: Ըստ որում, այդ բացասական հետևանքները պայմանավորված էին նաև սուբյեկտիվ գործոններով: Կարծում ենք, որ ստեղծված իրավիճակի համար պատասխանատվության իրենց բաժինն ունեին բոլոր քաղաքական ուժերը և գործիչները, սակայն մյուսներից առավել՝ հանրապետության կոալիցիոն կառավարության մեջ մտնող առավել ազդեցիկ քաղաքական ուժը:

Պետք է նշել, որ Միացյալ Չայաստանի մասին հայտարարության ընդունման ժամանակ ԳԳ նույնիսկ ճանաչված չէր այն տերությունների կողմից, որոնց հայ գործիչները Չայաստանին դաշնակից էին համարում, պարզ չէր, թե ինչպիսի սահմաններ էր ունենալու հայկական պետությունը: Իհարկե, մայիսի 28-ի հայտարարության օգտին բերվող փաստարկների մեջ կային այնպիսիները, որոնք ճիշտ էին, սակայն անհրաժեշտ էր ոչ միայն հայտարարել միասնական Չայաստանի մասին, այլև տնօրինել անհրաժեշտ ռեսուրսների և ուժի, այդ միավորումը գործնականում ապահովելու համար: Գուցե և անհրաժեշտ էր մեծ տերություններին ևս մեկ անգամ հիշեցնել թուրքերի տիրապետության տակ գտնվող հողերի մի մասի նկատմամբ

հայերի ունեցած իրավունքների մասին, սակայն այդ իրավունքների ապահովման համար անհրաժեշտ ռեսուրսներ, ուժ և հուսալի դաշնակիցներ չունենալով՝ մայիսի 28-ի ակտն այդպես էլ մնաց թղթի վրա, չունեցավ որևէ էական արտաքին քաղաքական հետևանք: Կարելի է ասել, որ մեծ տերությունները Սիացյալ Չայաստանի մասին ակտը «չնկատեցին», կարծես թե ոչինչ տեղի չէր ունեցել:

Փաստորեն մայիսի 28-ից հետո հայ գործիչների, քաղաքական ուժերի միջև սրված հարաբերությունները վերածվեցին քաղաքական «զգվոտոցի», ուր ամեն ոք աշխատում էր իր օգուտը քաղել:

Ավելի ուշ Ազգային պատվիրակության ղեկավար Պողոս Նուբար փաշան, պատճառաբանելով երևանում կռալիցիոն կառավարության բացակայությունը, հրաժարվեց հավատարմագիր խնդրել ԳԳ կառավարությունից, իսկ Սևրի պայմանագիրը պետք է ստորագրվեր պետությունների ներկայացուցիչների կողմից: Պողոս Նուբարն այդպիսի կարգավիճակ չունեի, ինչի հիման վրա էլ մերժվեց պայմանագիրն ստորագրելու նրա իրավունքը:

Սևրի պայմանագիրն ստորագրած մեծ տերությունների կառավարությունները մտադիր չէին գործուն միջոցներով ապահովել այդ պայմանագրի կենսագործումը, այն մնաց թղթի վրա և չկենսագործվեց կյանքում: Իսկ Առաջին Հանրապետության ղեկավարությունն իր վարած արտաքին քաղաքականության հետևանքով անկարող եղավ ստեղծված իրավիճակում գոնե նվազագույնի հասցնել երկրի տարածքային կորուստները: